

ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՔ «ՄԱՍԻՍ»

ԻԳՏԻՐ, (Երեւանի շահանգ) 7 մարտ

Ուրախ էինք, որ վերջապէս լուծւած վատ յաջողութեամբ Վեհ. Կաթողիկոսի միջնորդութեամբ փակուած ուսումնարանները բանալ եւ հայ մանուկները նորից շարունակեցին իրենց տարի ու կէս ընդհատուած ուսումը: Մանաւանդ ուրախ էինք նորանով, որ նոր բացուած ուսումնարաններում միատեսակ ծրագրով է դասուանդվում:

Ուսումնարանների նախկին փակման պատճառն այն էր որ, լուսաւորութեան նախարարութեան կարծիքով իբր թէ մեր ուսումնարաններն անկանոն եւ հակամասնկաւորական ուղղութիւն ունէին. բայց ինչպէս երեւաց գործերից եւ նոցա տուած ծրագրից՝ նոցա միակ փափաքն էր մեր դպրոցները իրենց տեսչութեան ենթարկելը: Վեհափառ Մակարը վերջապէս մի կերպ յարմարեցնելով նոցա իր ձեռքին՝ կարգադրեց բանալ մեր դպրոցներն այն պայմանաւ, որ Ռուսաց տեսչութիւնը միայն իւր հետ բանակցէր դպրոցական գործերի մասին, եւ ոչ թէ ամեն տեղ եւ ամէն մի Ռուսաց ուսուցչական ասպարիզին պատկանող միջամտէ եւ (համարեա) խանդարում պատճառէ Հայոց դպրոցական գործին՝ 89 թուի փետրվարի 14 ի կանոնների համաձայն: Վեհափառի վերջին այս դժգոհացիչ պայմաններն ընդունուեց կառավարութիւնից, որով եւ բացուեցին մեր ուսումնարանները:

Վեհափառի հրահանգած ուսումնարանական նոր ծրագրին, ինչպէս երեւաց, ուսերէն բնագրի ճիշդ թարգմանութիւնն էր, միայն տակն ստորագրած էր ոչ թէ Սեդ. Կոնստ. Գ. այլ Մակար Կաթողիկոս ասեալն: Հայտնի է, որ անաւերելի կարայդ նոր ծրագրում նախկինի հետ համեմատելով՝ Ուղիւն. պակասեւ են դասարանները, կրճատուել են նշանաւոր դասերի եւ առարկայների թիւը, միայն սոցա փոխարէն աւելացել են ուսուցչական թիւը, իսկ ուսուցչական թիւը եւ աշխարհագրութեան դասերը ուսերէն լեզուով պիտի դասուանդուի: Սահմանափակուեցին նաեւ միջնակարգ դպրոցների թիւը. — մինչեւ 89 թիւն ամեն տեղ եւ օրքան կամենայինք կարող էինք միջնակարգ դպրոցներ պահել, իսկ հարկաւոր դէպքում ունենալ նաեւ 7-երորդ քանոնացի դասարան (լսարան), իսկ այժմ իւրաքանչիւր թեմում միայն մէկ հատ միջնակարգ դպրոց պիտի ունենանք: Ահա սոքա են նոր ծրագրի բարերար արտօնութիւններն եւ ուրիշ ոչինչ:

Այլքսանդրապոլի, Ղարսի, Սխալցխայի նման բազմահայ բազմաբնակ մտայնութեամբ ունենալ միայն երկդասեան ծխական ուսումնարաններ, որովհետեւ թեմական բազմաբնակ չեն, չնայելով որ միայն Այլքսանդրապոլում բնակվում են 15 հազար հայ ժողովուրդ, եւ ուսումնարաններն 30 - 40 հազար բուրժուներով ու կառուածներով ապահոված են: Սորանից երեւում է, որ լուսաւորութեան նախարարութեան կարծիքով (?) (նպատակաւոր կարծիք) կրթութիւնը, լուսաւորութիւնն արագ քայլերով տարածելու եւ պոպարեւր հողի վերայ դնելու համար, մանուկներին եւ գոհակ ժողովուրդին Ամերիկայից Աւստրալիայից Պարսկաստան պիտի տեղափոխել: Գարծեալ գոհ էինք սորանից, որ սկզբնական կրթութիւնը մայրենի լեզուով կարող էինք տարածել. մտածում էինք այսքանը գոնէ

տարածել ամեն տեղ եւ սպասել նախաձեռնութեան արդար դատաստանին: Բայց երբեք սայդ արդիւններից տեղեկացանք, որ որ նոր պահանջներ կան Հայոց ուսումնարանների նկատմամբ: Կառավարութիւնը պահանջում է վերցնել ուսումնարաններից ազգային պարտաւիճակն եւ Հայաստանի աշխարհագրութիւնը. նոյնպէս պահանջում է, որ պետական ուսումնարաններում հայ մանուկներն իւրենց ազգային ինքն Ռուսաց լեզուով սովորեն: (Պետական դպրոցներից հայոց լեզուի դասաւանդութիւնը վաղուց է վերացել): Ասում են այս նոր տարօրինակ պահանջը շատ վատ է ազդել Վեհափառի վերայ եւ կառավարութիւնից եկած յայտագրի վերայ մակադրել է՝ «ԱՆՆԱՐ ԵՄ ԵՋ ԸՆԴՈՒՆԵԼ ԶԱՅՐ» Զգում է թէ ո՛րպիսի ծանր կացութեան մէջ է գտնվում ինքն, որովհետեւ ասել է՝ «Եւ իմ Կաթողիկոսացին» (Ռուսաց կառավարութիւնը) իրենց յետին գործիքը, որ նոցա ցանկութեամբ եւ հասարակութեամբ ազգային դէպքերը իրենց խաղաղութեամբ աւելի չափով ինչ քան որ նախաձեռնեցին բան թէ կարգէին: Եթէ ստույգ են այդ խոսքերն եւ սրտից բղխած, ուրեմն մօտ է ԶԱՅՐԻՄ:

Մակար ընթերցողներն յիշում են անշուշտ, որ Վեհափառ Մակարին կաթողիկոսացեալ համար օրպիսի ազդու միջոցներ էին գործողութեամբ կառավարութեան կողմից: «Խոհեմ քաղաքագէտներն» ուրախ էին սորա վերայ, պիղծելով թէ՛ Կաթողիկոսը կառավարութեան սիրելին լինելով՝ կը յաջողի ամեն բան յօգուտ ազգի կատարել, իսկ հակառակորդները պիղծում էին որ կառավարութեան սիրելին միայն նորա գործիքն է պիղծելով թէ՛ «Խոհեմ քաղաքագէտները», յուսով եմ, որ այժմ կ'զգան իւրեանց սխալ քաղաքականութիւնը «Կաթողիկոսութեան» ինքն ինքն եւ կը զգան նոքա, որոնք մեղադրում էին ի Տէր Հանգուցեալ Գէորգ Կաթողիկոսին իւր «չափաւոր» վարմանը պատճառաւ, որովհետեւ պարզ երեւում է, որ Հիւսիսային կառավարութիւնն ո՛չ սիրելիութիւն կը ծանաչէ, ո՛չ խոհեմութիւն եւ ո՛չ էլ նորանից կը վարձատրուին առաքելի ծառայութիւնները:

Տարօրինակ եւ աննպատակ պահանջ: Այժմ անտես են առնում այժմեան միլիոնաւոր հայ ժողովուրդն իւր մայրենի հողի վերայ, բացասում են այդ միլիոնաւոր ժողովուրդի բնական իրաւունքները, կրօնն ու լեզուն, ապա ինչ իրաւունքով են ընդունում Փիւնիկեցոց պատկութիւնը, Լատինացոց լեզուն ու անցեալն, որոնք հետքն անգամ չկայ աշխարհիս վերայ (իրրեւ Փիւնիկեցի եւ Լատինացի): Մանաւանդ վերջինիս լեզուի սովորելու վերայ պետական ուսումնարանների աշակերտների հոգիներն հանում են (չար. 8 դաս): Կամ մի՞թէ սորանով կարող են Արարատ, Արագած լեռների մէջտեղ եւ Էջմիածնայ մօտ՝ Մայրենի հողի վերայ ապրող հային մոռացնել տալ իւր ազգութիւնը, կրօնն ու լեզուն: Ո՞վ կարող է մոռացնել տալ հայու սրտում դարձած արմատ ձգած հայրենի անցեալ յիշատակներն, ո՞վ կարող է անջնջ յիշատակները մեր սրտից հանել:

Երկրորդ յուզիչ խնդիրն այն է, որ որ Կաթողիկոսը ենթարկուեցաւ ընդհանուր զինուորագրութեան: Հայերը պիտի տան առ այժմ հազար հոգուց վեցը իւրաքանչիւր տարի, 21 տարեկանից, իսկ թուրքերը զրամական տուրք պիտի վճարեն: Եւստերն ուրախանում են, որ վերջապէս հայերն էլ զիւրաշարժութիւն եւ զինավորութիւն

կը սովորին, որով կը կարողանան դիմադրել դրացի բարբարոսներին, իսկ անսովոր մայրերը վերջին յուսահատութեամբ մէջ են եւ լալուց աչք չեն բաց անում:

Յ. ԱՆՏԵՐԵԱՆ

ԷՋՄԻԱՇԻՆ, 18 մարտ

Էջմիածինն այժմ աւելի քան երբ եւ իցէ քնել է: Այդ բարոյական անշարժութիւնն ոչ թէ միայն զարմանալի, այլ եւ անտանելի է, քանի որ հենց այժմ եռանդ, գործունէութիւն, հոգատարութիւն է պէտք՝ մի շարք ծանր հարուածների առաջն առնելու համար: Անկասկած ձեռք արդէն ծանօթ են կրօնի դասատուութեան մասին ուսուցչական կառավարութեան բռնած դիրքն եւ արած առաջարկութիւններն, Հաւատում էք արդեօք որ Մակար Կաթողիկոսն այդ մասին աւելի քիչ բան գիտէ քան թէ Պոլսի ազգայիններն, որոնք հազարաւոր վերստեղծութիւն են: Որովհետեւ ուսուցչական կառավարութիւնը կրօնը ուսերէն դաս տալու մասին իրան Վեհ. Մակարին չէ գիտել, ուստի, ինչպէս առանց կարմրելու կրկնում են Վեհարանի մէջ մուտք եւ ազդեցութիւն ունեցող անձինք, ահա ինչու եւ ինչպէս պէտք է իմանար այդ բանը Վեհ. Մակար: Բայց որովհետեւ Ռուսաց ուսումնարանական վարչութիւնն համարեա բոլոր տեղերում՝ Տիֆլիս, Երեւան, Բագու, Եւլաի եւ այլ քաղաքներում, առաջարկել է կրօնուսուցչներին ուսերէն դասախօսել եւ կամ հեռանալ դպրոցներից, ուստի թեմական առաջնորդներն համաբնակեցան խանդարել Կաթողիկոս Մակարի հանգստութիւնն իրանց գրութիւններով, որոնց մէջ նոքա հրահանգներ էին պահանջում: Առաջնորդների գրութիւնն իսկապէս անելանելի է, քահանայները դիմում են առաջնորդներին հրահանգ են պահանջում շուտափոյթ կերպով առաջնորդները դիմում են Կաթողիկոսին հրահանգներ պահանջելով եւ ոչինչ պատասխան երկար ժամանակ չեն ստանում: Մինչդեռ Ռուսաց ուսումնարանական վարչութիւնը կրկնում է ամէն րոպէ թէ կամ ուսերէն դաս տուէք, կամ հեռացէք: Վեհարանի զեկավարները՝ Ներսէս Եպիսկոպոս եւ Արշակ Նահապետեան, մինչեւ անգամ ուղում են Մակարին էլ չներկայացնել Առաջնորդների գրութիւնները: Բայց այդ չի յաջողում: Ինչպէս հաստատ իրաւութիւն, պէտք է մոռացնելու հետեւ որ վերջին ժամանակներն ամէն կողմից սկսեցին նամակներ տեղալ Էջմիածին. այդ նամակներով ամէն կողմի եւ ամէն կողման անձինք հրաւիրում են Էջմիածինն որ պարտականութիւնը կատարէ մի այսպիսի կենսական խնդրի մէջ. վերջը մինչեւ անգամ սպառնալիքներ եղան. . . Վերջապէս Վեհ. Մակար՝ իր մարդոց խորհրդակցութեամբ գրում է մի աղբյւրագիր՝ ուսուցչական կառավարութեան ուղղած, որի մէջ ի միջի այլոց նա յայտնում է, թէ յարմար չէ որ կրօնը ուսերէն աւանդուի, որովհետեւ այդ դէպքում, ինքը, Կաթողիկոսը, անկարող պէտք է լինի հսկել իր ազգի նոր սերնդի կրօնական քաղցր դաստիարակութեան վրա. իր ազգասիրի վերջումը Վեհ. Մակար կարողանում է եւ այն միտքը անցկացնել, որ կրօնի դասատուութեան համար պէտք է փոքր ինչ զօրացնել եւ Հայոց լեզուի դասատուութիւնն: Այդ գրութիւնն ուղարկվում է: Տարաբաղդաբար աղբյւրագիրը ուսուցչական վարչութեան վրայ ազդեցութիւն չեն գործում. . . Եւ մինչեւ այժմ էլ խնդիրը չա-

բունակութեամբ է իր ընթացքով գնալ . սկզբ-
բուն, երբ կառավարութեան գործակալներ
ընկալեցին, որ ժողովրդի մէջ յուզում
է ընկնում, թոյլ տուեցին, որ մի քանի
տեղերում շարունակեն հայերէն դաստիար-
անք բայց հաստատ բան է, որ կառավար-
ութիւնն իր ծրագիրը չի փոխելու, քանի
որ ոչինչ ընդդիմադրութիւն Հայոց հոգեւոր
խիշխանութեան կողմից չի գտնուում: Անկա-
կած եթէ այդ ընդդիմութիւնն այսպէս չի
կարողանալ ցոյց տրուէր, Նախագահին եւ
իւր խումբին յետ կը բաժնուէին: Ռուսաստան-
ում ալ այժմ այնպիսի շարժումներ են լի-
նում, որ կառավարութիւնն իւր ճշդ բա-
ղաճականութեան վրա չափ էլ պնդել չի
կարող, մանաւանդ որ այս գործի զեկա-
վարները մի քանի անձինք են, մասնակցու-
թեամբ Նախագահին, Կորսակովի եւ այդպի-
սիների: Պետերբուրգում մեծ յուզումներ
կան. զրուցելով լարում է, եւ այդ պիտի
գրութեան մէջ Նախագահին չեն էլ կա-
րող շատ հեռու գնալ . . . իսկ այդ պիտի
գրութեան ժամանակ հարկաւոր է մարդ,
որ հասկացնի գործերի զրուցելուն: այդ
մարդ Կաթողիկոսը պէտք է լինի. իսկ Վեհ-
օրհայր այդ չի անում եւ չի էլ կարող ա-
նել. նա ամբողջապէս գտնվում է Նախա-
գահին, Սիմեոնեանի, Ներսիսի, Մամբ-
րէի եւ այդ կուսակցութեան ձեռքում:
Իսկ դժբաբ ընդդէմ էլ ամբողջ օրերով զբաղ-
ված են ուսել խմելով, եւ այնպէս վախե-
նում են Եւթիմանի Սիմեոնի պրոկուրորից,
որ ձայն անգամ չեն հանում. եւ ո՞վ է
դրանցից բան սպասում: Ի՞նչ խելք, ի՞նչ
սիրտ եւ ի՞նչ հոգի ունին դժբաբ որ գործ
չեն խորհրդաւոր տան, մի բան պաշտպա-
նեն. այս դեռ բաւական չէ: Գործ չեն ա-
մաչում ամէն օր կրկնել թէ՛ Եւթիմանում,
թէ՛ Վաղարշապատում եւ թէ՛ օտար տե-
ղերը եկած հայերի մետ, որ չարքէ պետա-
կան դպրոցներում սովորող Հայ աշակերտ-
ների համար կառավարութեան աջակց ընկ-
ներ: Միծաղիլ թէ ցատի . . . Այս, ի հար-
կէ հանգիստ ապրելու համար, ապահով
լինելու համար, կարելի է Վեհաբանը դար-
ձնել մի նշարան, Եւթիմանը դարձնել մի
անուշ քար, եւ ամենայն խոնարհութեամբ
կտարել ամէն մի պահանջ: Այս մարդ իկն
ասում են. քարը գլուխը թէ մեղանից յե-
տոյ ի՞նչ կը լինի: Եւ ողորմելի Հայոց ազգն
սպասում է, որ ունի Եւթիման, ունի Կա-
թողիկոս եւ եւ: Ինչպէս երեւում է այդ
վախկոտ ստորներին լու է ճանաչել Նախա-
գահին, որից այս օրերս այս տեղ ստացուե-
ցաւ մի աւելի ծանր նկատողութիւն: Եւ-
նոյսիկն գրում է, որ իր կարծիքով աւե-
լորդ է Հայոց դպրոցներում Հայաստանի աշ-
խարհագրութիւն եւ Հայոց պատմութիւն
դաս տալ, քանի որ այժմ ո՛չ Հայաստան կայ
եւ ո՛չ էլ Հայոց թագաւորութիւն: Անկա-
կած Նախագահին իւր այսօրուայ նկատողու-
թիւնը վաղը պահանջ կը դարձնի: Ձգվեալ
է կառավարութեան աջակց ընկները կրկ-
նում են Վեհաբանում. ուրեմն . . . բայց,
վերջապէս որոշող կարող է հասցնել այս
անխճալ անտարբերութիւնն, այս խայտա-
ռակ մեղքութիւնը:

ԲԱԳՈՒ, 16 մարտ

Այստեղի Հայոց եկեղեցում մի տղեղ
անկարգութիւն պատահեցաւ. ժամերգու-
թեան ժամանակ՝ երեցիոսն որ տեղական
հարուստներից մէկն է, ձեռք եկեղեցու
մէկ տիրացուն, խեղճին արիւնաթաթախ

անելով: Այդ պիտի անկարգութիւններ սո-
վորական են գառնում նոյն իսկ քաղաքների
Հայոց եկեղեցիներում, եւ հայ հոգեւո-
րականների բարոյական անկումն է դժու-
րաւորում:

ՏՓԽՍ, 20 մարտ

Երկար ժամանակ է, որ այս տեղ է յայտ-
նի բարոն Նիկողայի. թէ ի՞նչ որոշ եւ պաշ-
տօնական յանձնարարութիւն ունի նա,
յայտնի չէ: Բայց լուրեր են պտըտում, որ
նա ուսումնասիրում է տեղական ազգերի
յարաբերութեան գործը: Բարոն Նիկողայի
կարծիքները Կաթողիկոսի վերաբերութեամբ
միշտ կշիռ ունին Պետերբուրգում. տարա-
բաղդ արար դա էլ Տօլստոյի կուսակցու-
թեան կողմն է աւելի:

ԵՐԵՎԱՆ, 10 մարտ

Հայոց դպրոցներն ենթարկվում են Ռուսաց
ուսումնարանական իշխանութեան խիստ
հակոցութեան. այդ իշխանութեան ներկա-
յացուցիչներն ամէն օր մտնում են դպրոց-
ներն, եւ ամէն տեսակ հարցումներով եւ
նկատողութիւններ են անում: Մեծ եռան-
դով տեղեկութիւններ են ուղարկում Թիֆ-
լիս հոգաբարձու Նախագահին: Նախագահին
այս օրերս թուղթ է գրել Եւթիմանի, Մա-
կար Կաթողիկոսին, որով պահանջում է ի-
րան ուղարկել Հայոց ուսումնարանների
վարժապետների եւ վարժուհիների ցուցա-
կը, եւ մի եւ նոյն ժամանակ ցոյց տալ թէ
նոքա ունին ուսուցչական վայելչանք:
Գուցէ նոր տարածայնութիւններ կը գուրս
գան. որովհետեւ վարժապետներից շատ բը
նոյն իսկ Հայոց ուսուցչանոցներից վիսյա-
կան չունին, եւ վարժապետութեան տեղ
են ստացել՝ մեծ մասամբ՝ Կաթողիկոսի
թոյլտուութեամբ: Իսկ Ռուսաց նախարա-
րութիւնը մեծ ցանկութիւն ունի Ռուսաց
դպրոցներից աւարտողներին տեղաւորել
Հայոց դպրոցներում: Ահա աստիճան մեր զըպ-
րոցների գործը շատ խախտւում է:

ՂԱՐԱԲԱՂԻ

ԱՍՏՂԱԳԵՏԸ

Է.

ԹԱԼԻՇԻ ՄԵԼԻՔԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԸ

Վարանդայի մելիքը գիշերը շատ ան-
հանգիստ անցուց: Չէր գիտեր ի՞նչ ընել,
Դառն մտածութիւններ կը պաշարէին նորա
երեւակայութիւնը: Խամայի մելիքներն
իրենց այժմերը միացուցած երկար ատենէ ի
վեր առիթ մը կ'որոնէին պատերազմելու
Վարանդայի մելիքի դէմ եւ մելիքը գիտէր
թէ ինք կարող չէ գիտադրել այդ միացեալ
այժմերուն: Մելիք Շահնազարեան իւր յոյսը
դրած էր Թալիշի մելիքի դաշնակցութեան
վրայ, եւ այժմ այդ յոյսը կ'ոչնչանար: Չէր
կարող նա խորհիլ թէ ի՞նչ պատճա-
ռաւ Զուհուդ տակաւին իւր նշանածը
չտեսած կը մերժէր նորա հետ պսակ-
ուիլ: Գիտէր թէ իւր եղբորորդին հաս-
տատ եւ անվեհեր բնաւորութեան տէր լի-
նելով բռնութեան առաջ տեղի չսկիտի տար,
իսկ քաղցր միջոցներն արդէն սպառած էին:
Մելիքը կը ցաւէր նաեւ որ վշտացուց

Զուհուդն ու աստղագէտը: Լինելով բա-
ւական սնահաւատ, չէր կարող բաժնութեամբ
նոր նշանաւոր գործերու ձեռնարկել առանց
նախապէս աստղագէտին հարցումներ ընե-
լու, եւ սակայն այժմ՝ կարող չէր այլ եւս
վստահանալ աստղագէտին որ վիրաւորում
լինելով անշուշտ այնուհետեւ պիտի խորհէր
զինքն կորստաբեր աստղերը բարեգուշակ
ցոյց տալով, Այդ կասկածանքներով որոշեց
այլ եւս խորհուրդ չհարցնել աստղագէտին,
եւ առաւօտուն իւր քով կանչել Թալիշի մե-
լիքի որդին, բարեկամաբար խորհուրդ ընել
եւ բացատրել թէ անկարելի է որ Զուհուդ
ամուսնանայ նորա քրոջ հետ:

Տասն օրէ ի վեր Թալիշի մելիքի որդին
կը գտնուէր ի Չանախի եւ շատ դժգոհ էր
որ պատասխանը կ'ուշացնէին: Եւ չէր կա-
րող ըմբռնել թէ ի՞նչ պատճառ կար որ
Զուհուդ եւ հօրեղբայրն այնքան երկար
բանակցութիւններ ունենան. ո՞չ ապաքէն
մեծ պատիւ էր Զուհուդի ամուսնանալ
Թալիշի մելիքի ազնկան հետ: Անհամբեր
երիտասարդն որոշած էր վերջնական պա-
տասխան մը պահանջել, երբ հրաւիրուե-
ցաւ մելիքի կողմանէ:

—Շատ կը ցաւիմ, սիրելի Յուսէին, ը-
սաւ, որ քեզ պիտի յայտնեմ շատ անխորժ
նորութիւն . . . :

—Ինչ կը թուի, պատասխանեց զիւրա-
բորբոք երիտասարդն, որ ոչ մի ինչ այնքան
անախորժ կրնար լինիլ, որքան անխորժ
էր սպասել այնքան:

—Ի՞նչ, միթէ՛ կը ձանձրանա՞ք իմ հիւրա-
սիրութենէ:

—Ի հարկէ կը ձանձրանամ. ես գործի
համար եկած եմ եւ չէի կարծեր որ տասն
եւ չորս տարի առաջ տրուած խօսքը՝ կա-
տարելու համար հարկաւոր լինէին այդքան
խորհրդակցութիւններ, այդքան յետաձը-
գումներ:

Մելիք Շահնազարեան բաւական դժգոհ
եղաւ իւր հիւրի այդ գոռոզ վարմունքէն,
բայց եւ այնպէս զսպեց իւր բարկութիւնն:

—Ես վաղուց կը ցանկայիմ, ըսաւ մելիքը,
տեսութիւն ընել ձեր հօր հետ, որոյ հա-
մար խորին յարգանք կ'ըզամ. նա ինձ հետ
միշտ եղած է սերտ դաշնակից. բայց ի՞նչ
ընել: Կաշխատիմ՝ համազել եղբորորդիս,
սակայն գործին յետաձգութեան պատճա-
ռը նորա յամուսնութիւնն է:

—Ի՞նչպէս, ընդմիջեց մելիք Յուսէինն
աւելի բորբոքուած, Զուհուդը չուզե՞ր պը-
սակուիլ իմ քրոջ հետ: Միթէ՛ նա կը կարծէ
որ կարող է այսպէս կատակներ ընել մեզ
հետ անպատիւ կերպով: Եւ դո՛ւք, մելիք,
լինելով այդ տան գլխաւորը, լինելով նորա
հօրեղբայրը, թո՛յլ կուտաք նմա այսպէս վար-
ուիլ: Ես պարզ կը տեսնեմ որ դուք համա-
ձայն էք նորա հետ եւ միաբան կը գործէք:
Ինչո՞ւ ուրեմն ի դուր տեղին ինձ այսքան
սպասել կուտաք: Կարելի էր այդ գեղե-
ցիկ պատասխանը շուտ տալ: Ո՞վ կը կարծէր
որ Վարանդայի մելիքը կը խաղայ իւր տը-
ւած խօսքի հետ, ինչպէս մի երախայ . . . :

—Հանգարա՛ք, հանգարա՛ք, ա՛յ տղայ,
ընդհատեց մելիք Շահնազարեանը, դու կը
մոռնաս զքեզ . . . :

—Ամենեւին զիս չեմ մոռնար, պատաս-
խանեց զայրացած երիտասարդն իսկ դո՛ւք,
մելիք, կ'ըզամք թէ ի՞նչ գաղափար պէտք
է կալմել մի մարդու մասին որ տասն եւ
չորս տարի առաջ, ի ներկայութեան խամ-
սայի բոլոր մելիքներու տուած խոստումն
այժմ կ'ուզէ ոչնչացնել առանց ո՛ր եւ է
պատճառի: Ի՞նչ անուն պէտք է տալ մի
այսպիսի մարդու:

—Յուսէին, մտածէ որ բոլոր տանդ մէջ
չես:

—Ես առէն տեղ մի եւ նոյն եմ. ամէն
տեղ եւ ամէն մարդու երեսին ճշմարիտը
կը խօսիմ: Դուք կը համարձակիք ծածկել
նախատինքով իմ քոյրս եւ ամբողջ մեր տան
անունն, իսկ ես պէտք է լսեմ:

—Բայց Յուսէին, միթէ այդ ի՞նչ մեղ-
քն է:

—Մեղք, ես երախայ չեմ. ես լաւ կը
հասկնամ ձեր անտեղի պատճառարանու-
թիւններն: Իսկովիւնը մի ծածկէք այս-
պիսի ոչինչ խօսքերով որոյ ես բնաւ չեմ
հաւատար: Մենք ունինք թրեր եւ խէն-
չարներ որք ամենեւին ստոր չեն ձեր ու-
նեցածներէն. մեր զօրքերը ձերինէն պակաս
չէ: Դուք շուտով կը տեսնէք թէ թալիշի
մելիքը դիտէ՞ թէ ոչ վրէժխնդիր լինի
իրեն եղած այդ նախատանաց համար: Զեր
Չանախչին կազմուած չէ սարերէ: . . .

—Յուսէին, քու հայրդ պատուելու
պատճառաւ միայն կը ներեմ քեզ այդ բո-
լորով խօսքերու համար:

—Զեր ներողամտութեանը կարօտ չեմ:
Ահա իմ պաշտօնս — եւ ձեռքը դրաւ խէն-
չարին վրայ, — ասով ամէնուն առաջ հա-
մարձակ կ'ըսեմ թէ՝ մելիք Շահնազարեան
խաբերայ է: . . .

Մելիքը բորբոքեցաւ, աչքերն արիւնով
լեցուեցան եւ գոչեց:

—Լիբր տղայ, դուքս տնէս, թէ չէ
կ'երդնում բոլոր սուրբերու անունով որ չեմ
յարգեր այլ եւս հիւրասիրութեան սուրբ
օրէնքներն որք կը պաշտպանեն զքեզ ընդ-
դէմ իմ հարուածներու: Դուքս կը կրկնեմ:
Կ'արհամարհեմ զքեզ, կ'արհամարհեմ քու
ընտանիքդ, բոլորքդ եւ ամբողջ թալիշի
ժողովուրդը: Թող լինի անէծք, մահ եւ
ձշտական պատերազմ մեր մէջ, մինչեւ որ
ես կործանեմ Զէյլան եւ շաղախեմ արիւ-
նով ձեր քնակարաններու մոխիրն: Եթէ չի
վախնայի պղծել իմ ձեռքերը, քեզ անպատ-
ճառ կտոր կտոր կ'ընէի եւ մարմինդ գի-
շակիր թաշուկներուն կուտայի: Տէ՛ր Աստ-
ուած, ինչ կը տեսնեմ, մի համբալ կը հա-
մարձակի հայհոյել ինձ: . . .

—Մի՛ կատար, մելիք, ըսաւ Յուսէին
սառնութեամբ, ի դէպ արիւնդ կը սզտո-
րես: . . . եւ զայս ըսելով դուքս ելաւ սեն-
եակէն, հեծաւ իւր ձին եւ իւր խումբին
հետ հեռացաւ Չանախչիէն:

Մելիքը բարացած մնաց: Արտմտութե-
նէն կարող չէր մի բառ արտասանել:

Ը.

ՇԱՏ ԽՈՍՏԱՅՈՂԸ

Մեր խեղճ կալանաւորներն ազատեցան.
դեռ կէս օր չեղած նոքա կանչուեցան մե-
լիքի քով, որ սիրով ընդունեց զանոնք եւ
ներողութիւն խնդրեց Զուլուգէն:

—Ո՛ր թէ դուք, այլ ես ձեզմէ պէտք է
ներողութիւն խնդրեմ, հօրեղբայր, ես ձեր
առաջ այնքան յանցաւոր եմ որ չգիտեմ
թէ ինչպէս կարենամ քաւել յանցանքս:

—Մոռանք այդ ամէնը, սիրելի Զուլ-
ուգէ, ըսաւ մելիքն: Այժմ ուրիշ գործ ու-
նինք: Կը ճանաչեմ քու պատերազմական
քաջութիւնդ եւ այդ պատճառաւ կը ցան-
կամ յայտնել քեզ իմ դիտաւորութիւններս:

Մերժեցի թալիշի մելիքի առաջարկու-
թիւնն. այժմ դու ազատ ես, այլ ես չեմ
ստիպեր զքեզ ամուսնանալ նորա աղջկան
հետ: Ես այժմ դժոյղի նման կ'ատեմ նոցա

բոլոր ընտանիքն:

—Ա՛խ, որքան շնորհակալ եմ ձեզ, հօ-
րեղբայր, որքան բախտաւոր եմ, եւ որքան
ուրախ:

—Ինձ շնորհակալ մի՛ լինիր, Զուլուգէ:
Կառուեցայ թալիշիներու հետ, որովհետեւ
քո նախնին հարսնացուի եղբայրը, լիբր
տղայ, համարձակեցաւ զիս նախատել իմ
տան մէջ: . . . Պատերազմ յայտնեցի նոցա
եւ պէտք է պատրաստուիմք:

Ինձ յայտնի է թէ Խոստայի միւս բոլոր
մելիքները պիտի միանան թալիշի մելիքին.
մեր բաւական զօրք ունինք, ամէնքն ալ բաջ,
եւ սախայն միայնակ եմ չորս մելիքներու
դէմ: Ուրեմն պէտք է մտածել աւելի հիմ-
նաւոր կերպով առաջն առնուլ մեզ սպառ-
նացող փոթորիկին: Ըսէ՛ ինձ, Զուլուգէ, դու
որ այնքան երկար ատեն մնացիր Զուլու-
չիքցիներու քով, արդեօք այնքան բա՞ջ եմ
եւ այնքան անձնավտանջ յարձակումներու
մէջ որքան կը պատմուի նոցա համար:

—Զուլուչիքցիք արժանի են իրենց վա-
յելած համբաւին:

—Ուրեմն կրնամ քեզ յայտնել իմ նպա-
տալ: Ես կը կամիմ որ Փանահ խան եւ նո-
րա Զուլուչիքցիք ինձ օգնեն մելիքներու
դէմ: Այդ անհրաժեշտ է եւ քեզ պատգա-
մաւոր պիտի դրկեմ Փանահ խանին. դու
լաւ կը ճանչես ըստականներն եւ դիւրու-
թեամբ կրնաս կատարել զեռապանաստու-
թիւնը:

—Մեծ ուրախութեամբ կը կատարեմ
ձեր հրամանն, հօրեղբայր, պատասխանեց
Զուլուգէ հիացած: —Կարելի չէ՞ որ այսօր
ինձ թոյլ տաք ճանապարհ իյնալ. որքան
չուտ, այնքան լաւ: Փութանք եւ թշամ-
եաց վրայ մենք լինինք նախադարձակ:

—Դատողութիւնդ խելացի է, Զուլուգէ,
բայց օր մը ետքը պէտք է ճամբայ իյնաս:
Ես կը կամիմ որ ներկայանաս Փանահ խա-
նին այն փառքով որ կը վայէ Վարան-
դայի իշխանին: Քեզ կը յանձնեմ թանկա-
զին ընծայներ Փանահ խանի համար. ա-
ռանց ընծայի Պարսիկները ոչինչ կ'ընեն:

Յետոյ գառնալով դէպ ի աստղագէտն,
ըսաւ:

—Իսկ դու, իմ թանկագին աստղագէտ,
դու եւս մոռցիր անցեալն եւ ուղիղ կեր-
պով որով թէ վաղի ո՛ր ժաման աւելի յար-
մար կը լինի դեռ պանութիւնը ճամբայ հա-
նել:

—Ամենամեծ ուրախութեամբ, մելիք,
պատասխանեց աստղագէտը, միայն թոյլ
տուէք ինձ խնդրել ձեզմէ որ զիս եւս ու-
ղարկէք Զուլուգի հետ:

—Ինչո՞ւ համար:

—Նորա համար որ ձեր դեպքանութիւնը
կարենայ իւր մէջ մի վարմունքը տնօրինել
ըստ ժամանակին. ես կը լինիմ նորա ուղե-
ցոյցն:

—Համաձայն եմ, պատասխանեց մելիքն.
աւելի լաւ է որ ես առժամանակ զրկուած
լինիմ մի այնպիսի իմաստուն մարդու ներ-
կայութենէ՝ որպիսին դու ես, որ կարող է
ինձ համար որոշել թէ երբ պէտք է շէջ-
ծխեմ, երբ որսի երթամ: Կարծեմ ապոնց-
մէ աւելի կարեւոր պարագայունք չպիտի ու-
նենամ մինչեւ ձեր վերադարձն, որովհետեւ
թալիշի մելիքը չի համարձակիր միայնակ ար-
շաւանք գործել իմ երկրի վրայ, իսկ մինչեւ
միւս մելիքներու հետ միանալը դուք Աս-
տուծոյ յայտնութեամբ կը վերադառնաք,
եւ ես քաջ Զուլուչիքցիներու աջակցու-
թեամբ երկիւղ չեմ ունենար մեր այժմու
անհաւատարմութենէն: Մնաք բարեաւ, իմ
սիրելիներ, զնոցէք հանգստացէք: Ամէն
ինչ վաղուան ես կը հոգամ:

Զուլուգէ հրախեց աստղագէտն իւր
սենեակին. երբ առանձին մնացին, Զուլու-
չուգ սկսեց խենդի նման վազվզել իւր սե-
նեակին մէջ բացագանչելով:

—Ինչ բախտ է, ինչ բախտ է. ազատ-
ուեցայ բարբարոսական ամուսնութենէն,
հաշտուեցայ հօրեղբորս հետ, կրկին կը տես-
նեմ իմ սիրելի Սալիհան, կրկին կը գրկեմ
իմ երախայներն. ա՛խ, որքան բախտաւոր
եմ:

Այստեղ ընդհատեց նա իւր խօսքն, եւ
դառնալով աստղագէտին որ այդ միջոցին
կը գրէր, ըսաւ:

—Խնդրեմ, մէկդի ձգէ՛ այդ բո-
խտական գործերն եւ ուրախացիր ինձ
հետ:

—Ես ուրախակից եմ ձեզ, պատասխա-
նեց աստղագէտը, զուլուգ վեր բարձրացը-
նելով, եւ նոյն իսկ ձեր ուրախութիւնը
բազմապատիկ ընելու համար իմ հաշիւները
կ'ընէի:

—Ես այդ բաներուն չեմ հաւատար.
դու կը հաշուես աստղերու ընթացքը, բայց
հիմա ցերեկ է, զանոնք տեսնել կարելի չէ:

—Հարկաւոր չէ անպատճառ զանոնք
տեսնել: Ինձ յայտնի են անոնց շրջաններն,
անոնց պտըտելու ժամանակները թէ՛ իրենց
առանցքի շուրջն եւ թէ երկրադուռի
շուրջը: . . .

—Լսէ՛, դու խոստացար լինիլ իմ հա-
ւատարիմ ծառայն, իսկ այժմ կ'աշխատիս
խաբել զիս քու կեղծ ու պատիւ պատմու-
թիւններովդ, ինչպէս կը խաբես ուրիշները:
Խոստովանէ՛, որ քու բոլոր աստղաբաշխա-
կան գիտութիւնդ կատարեալ ստույգ ինն է:

—Դէ՛, մելիք: . . .
—Պահէ՛ քու բարոյներդ անոնց համար,
ոյք կը հաւատան քեզ: Ես չեմ մեղադրեր
զքեզ քու խորամանկութիւններուդ համար.
մէկ խօսքով, պէտք է հաց ճարել, եւ ի
հարկէ, աւելի լաւ է աստղագէտ լինիլ քան
թէ մութացկանութիւն ընել. ճակատագիրն
ամենեւին հարստութիւն չտար: . . .

—Խնջալէս, մելիք, միթէ դուք այդ պի-
տի կարծիք ունիք իմ մասին: . . .

—Ո՛չ միայն կարծիք, այլ եւ համոզուած
եմ որ այդպէս է:

—Ուրեմն, ես ձեր աչքի առաջ չունիմ
ո՛չ մի արժանաւորութիւն:

—Ընդհակառակն, դու ունիս հաւատա-
րիմ ծառայի արժանաւորութիւններ, եթէ
միայն վախճիրս: Եւ հաւատա՞ ինձ, որ
այդ ծառայութիւնը քեզ համար աւելի օգ-
տարեք եւ շահաւէտ կը լինի, քան թէ բո-
լոր աստղաբաշխական գիտութիւնն: Ես
կ'ուզեմ յանձնել քեզ մի կարեւոր գործ:
Լսէ՛:

Վաղն առաւօտ մենք ճանապարհ պիտի
իյնանք դէպ ի Զուլուչիքցիներու իջեւան-
ները. երբ մօտենանք Փանահ խանի բնա-
կարանին, դու պէտք է աննշմարելի կեր-
պով բաժնուիս իմ գունդէն եւ՝ երթաս իմ
սիրելի Սալիհային իջեւանն: Զգուշութեամբ
տեղեկութիւններ պէտք է հաւաքես նորա
մասին, պիտի աշխատիս տեսնուիլ իմ կնոջ
հետ, բայց այնպէս որ նորա ազդեականնե-
րէն ոչ ոք իմանայ: Յետոյ նոյնպէս զգու-
շութեամբ կը վերադառնաս ինձ մօտ եւ քո
բոլոր տեղեկութիւնները կը հաղորդես ինձ:
Եթէ դու խոհեմութեամբ կատարես այդ
բոլորն, այն ժամանակ ես կարող եմ նախա-
գուշակել քեզ համար, աւելի ճշուութեամբ
քան բոլոր աստղագէտներն, որ շատ Լուսնա-
ներ իմ ըստիկէն կը թռչին եւ կը մտնեն
քու ըստիկէն: Տէ՛ս, պէտք է զգոյշ լինիս եւ
յետոյ բերնէդ մի բառ չպիտի հանես Որ-

նական, կիրակոս Գանձակեցի, Մաղաբիա Վանական, որք պատմած են Մոնղոլաց արշավանքն ի Փոքր-Ասիա ժ.Վ. դարուն. Թովմաս Մեծորացի, Ժն դարուն, պատմագիր Լէնկթիմուրի, եւ ուրիշ բազմաթիւ ժամանակագիրներ որք մեծ արժէք չունին։ Այս երկրորդ շրջանին վերջերք, գրականութիւնը կը թալանայ եւ կ'այլասեալ։

Հայ գրականութիւնը կը վերականգնի երրորդ եւ վերջին շրջանին, ԺԸ դարուն, երբ Մխիթարեանը կը հաստատուին ի Վենետիկ, ի Դրիւնտէ եւ ի Վիէննա։ Մխիթար, իւր հայրենիքէն վտարուած արքայ, 1717ին հիմնեց այդ գիտնական միաբանութիւնն, որ բաւական կը նմանի Բենետիկտեանց միաբանութեան, եւ վարեց զայն մինչեւ իւր մահն, 1749ին։ Յայնմհետէ, օգտակարագոյն գործեր ելած են Ս. Ղազարի վանուց մամուլներէն։ Բաւարանք, քերականութիւնը, Հոմերոսի, Վիրգիլիոսի եւ ուրիշ բազմաթիւ դասական հեղինակաց թարգմանութիւնը, գիտնական աշխարհի առաջ ի յայտ բերած են աշխատութիւնըն հայագիր Հարց, որք լաւագոյնս կը ծանօթացնէին զՀայաստան եւրոպական բանասիրութեան (philologie), եւ միանգամայն եւրոպայի գիտութիւններն՝ Հայաստանի, որ անյազաբար կ'իւրացնէ զայնս։ Երկու պարբերական հրատարակութիւնը, Բազմալեւ ի Վենետիկ եւ Եւրոպա ի Վիէննա նշանակաւ են այս հաղորդակցութեանց, որք կը կարգացունին ամեն ուսեալ հայերէ առնուերք ուր ցրուած են։ Սոքա են կապերն հայ Բնկերութեան, որոյ իղձերն եւ ջանքերն երբեմն պատմած է Պ. Տիւլորիէ։

Լաւ մը գատելու համար հայ գրականութեան արժէքն, հարկ է գիտնալ լեզուն. սակայն այս գիտար գնահատումը դիւրացնելու համար, Պ. Ֆէլիքս Նէվիլ արգամանած է երկար կտորներ գլխաւոր գործերէն որք պատին են այդ գրականութեան։ Մասնաւորապէս իւր ուշի դարձուցած է օրհներգական մեծ հաւաքածոյի մը վրայ, Շարականն, որ հետզհետէ աճած է Երարէն, ուր սկսուած է, մինչեւ Ժ.Վ. դարն, ուր շրջանը փակուած է։ Քսան հեղինակը մասնակցած են այնմ, գրեթէ հազար տարուան ժամանակամիջոցի մը մէջ, Հայաստանի նշանաւորագոյն մատենագիրք աշխատակցած են այնմ, սկսեալ Սահակ առաջնէն, Կաթողիկոս եւ Պատրիարք 390ին, մինչեւ Յովհաննէս Պլուզ վարդապետն, այսինքն 1300ին։ Այդ թուականին, Սիւնեաց եպիսկոպոս Առաքել, Ստեփաննոս առնուն քահանային հետ, վերջնապէս փակեց Շարականաց շարքը։ Մխիթարեան միաբանութեան վարդապետներէ մին, իրականաւոր ուսումնասիրութեան մը մէջ, մեկնած է այդ աղօթքներն որք յար կը գործածուին հայ եկեղեցւոյ ժամերգութեան մէջ։ Շարականն ընդհանրապէս կը ներշնչուի երբայական սաղմոսներէն, որպէս անոր ներշնչուած է լատին եկեղեցւոյ պաշտամանց մատենան, կարելի եղածին չափ կը մերձենայ նմա, առանց կորուսանելու իւր բնատուր ոճն։ Այս օրհներգը, ուր կը փայլի հրուած ջերմեանդութիւն մը, մասնաւորապէս կը հռչակեն Յիսուս-Քրիստոսի այլակերպութիւնները, Հոգեգալուստը, Հոգւոյն Սրբոյ էջը, Ս. Յովհաննէս Մկրտչի, Ս. Պետրոսի եւ Ս. Պողոսի սոներքը։ Տեսալ մը աշխարհական ներդաշնակութեամբ, Շարականը կը պարունակէ նաեւ աղօթքներ ի պատիւ Կոստանդինի եւ Թէոփորոսի, եւ արդարացի կերպիւ ի պատիւ Ս. Հովնիսիմէի եւ իւր ընկերուհեաց, կուսանք եւ նահատակը

Գիտելեւորանոս Կայսեր օրով։ Ուրիշ աղօթքներ կը հռչակեն Վարդանի պատերազմական արութիւններն, որ, 451ին, հաղար զինուորաց հետ դիւցազնաբար մեռաւ քրիստոնէական հաւատոյ համար, պատերազմելով ընդդէմ կռապաշտ Պարսից։

Պ. Ֆէլիքս Նէվիլ Շարականի քաղաածոց կցորդած է ուրիշ բազմաթիւ հատակոտորներ հայ եկեղեցւոյ Հայրերէն եւ պատմագիրներէն, որոց մէջ մասնաւորապէս ուսումնասիրած է Յովհաննէս Զ Կաթողիկոսն՝ ի մասին Հայաստանի նախնական պատմութեան եւ զՄատթէոս եղեսոացի՝ ի մասին առաջին խաչակրութեան։ Պ. Ֆէլիքս Նէվիլ ուզած է միայն ընդհանուր գաղափար մը տալ հայ գրականութեան վրայ, եւ իւր գործ պիտի նպաստէ որ եւս քան զեւս դնահատուի այն։

ՊԱՐԹԵԼԸՄԻ ՍԷՆԴԻԼԷՌ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

ՕՐԹԱԳԻԼ, 3 ապրիլ

Մեր ու Հայաստանի Զատիկը. — Կրօնասիրական ոգի. — Տարուինակութիւն եւ Պ. Քալանթարեանց. — Կտակներու եւ նուէրներու քննարկ։

Զատիկն եկաւ, բայց մեզ ինչ։ Արդարեւ Զատիկն Հայոց ուրախութեան գլխաւոր օրն է բայց այդ հրճուանքն Հայաստանի Հայոց համար է։ Խիստ ձմրան, երկար պահեցողութեան կը յաջորդեն գարուն եւ ուտիք եւ Հայաստանի հայերն — հագին ներնին ալ մաքրուած — իրաւունք ունին ցնծալ ու երգել զՀայոց Զատիկն է եկել։

Իսկ մեք։ Աւա՛ղ, ոչ ձմեռ ունինք որուն գարուն յաջորդէ, ո՛չ պահք, որպէս զի անձկանք Զատիկի սպասենք, եւ մեր խիղճերն ալ ա՛յնքան թեթեւ են արդէն։

Սակայն շատերնիս որքան ալ առժամանակեայ կերպով ուժեղ սրտեր ունենանք, բայց եւ այնպէս կը տենչանք ջերմ կրօնասէր տեսնել բոլոր հայերն։ Ինչո՞ւ։ Ո՞չ ապաքէն մինչեւ իսկ ամենէն աւելի ազատամիտ ծնողք կ'ուզեն որ իրենց զաւակները կրթութիւն այն կրօնից մէջ յորմէ իրենք հեռացած են։

Եւ մեր այդ տենչերը գոհացում կ'ուենան յորմէ հետէ ազգային գործոց գլուխը կը վայելենք, աշխարհական հայրապետ մը որ իւր կորովաբեր աչքերովն ուր որ նշմարէ անկրօնութեան փոքրիկ ճճի մը կ'ուզէ անմիջապէս զայն ստակեցնել իւր կրօնին ներքեւ։ Ահա՛, այժմ Ազգ. Վարչութիւնը կը պատրաստուի անաթէմա կարգալ Պ. Քալանթարեանցին որ իւր գասախօսութեանց մէջ մի անգամ Տարուինի անունը բերնէն փախուցներ է։ — Ա՛խ, եթէ Տարուին փոխանակ ըսելու թէ մարդիկ կ'ապիկեն երած են, հաստատել թէ մեր նախահարք բոլորները եղած են, ս'ըբան սիրելի պիտի լինէր իւր անուն ի մասնաւորի Բերայի Թաղ խորհրդոյ։

Ի՛նչ եւ է։ Հաւանօքն Պ. Քալանթարեանցի Տարուինասիրութիւնը կ'անցնէր անտես եւ Ազգային Կրօնական ու Քաղաքական պատկառելի ժողովոց խորին մտաւորաբանութեան աւարկայ չէր լինէր եթէ Պ. մանկավարժը չկատարէր այնպիսի փորձեր ոյք խորապէս վերաւորեցին Բերայի պատուար-

ժան ազգայնոց անձնասիրութիւնը։

Պ. Քալանթարեանց անցեալները կ'այցելէ այն շէնքն զոր Բերայից քաղցրահնչուն չիւն բարբառով զպրոց կ'անուանեն, անդ կը կատարէ մի քանի մարդավարական փորձեր ապացուցանելու համար թիւորք սեռի եւ կոչու սեռի ներկայացուցիչ որքան որ ալ մի եւ նոյն ձեւով աչք, քիթ, բերան ունին, բայց եւ այնպէս մի եւ նոյն չափով չեն օգտուիր այդ գործարաններէ։ Փորձով կ'ապացուցանէ որ մանչերն աւելի հեռուէն կրնան կարգալ քան աղջիկներն եւ սոքա աւելի զգայուն քիթ ունին քան մանչերն։ Այս վերջին ճշմարտութիւնն հաստատելու նպատակաւ Պ. մանկավարժն ալ կ'առնու եւ կը կերցնէ թէ՛ մանչերուն եւ թէ՛ աղջիկներուն։ Երբ Բերայից կ'իմանան եղելութիւնն, ի հուր բարկութեան կը բռնուին — վասն զի գիտեն թէ՛ հում աղը կ'վերուն կը կերցնեն, եւ իրենց պետը գոչէ։

— Ի՛նչ, որովհետեւ մեր վարժարանն ալ խոտի կը նմանի, միթէ աղ կէ՛։ Պ. մանկավարժը կը հետեւցնէ թէ մէջիներն ալ կ'ուրու ծագե՞ր են։

Ահա՛ բուն շարժառիթն այն նշովքներու որոց սպառնալեաց ներքեւ է Պ. Քալանթարեան։

Ամեն ուրեք կրօնի ջերմ պաշտպանութիւն, բանակին գլուխը միշտ նոյն հայրապետը։ Այս շարաթ Խառն Ժողովոյ նիստը շատ խոսովայոյց կը լինի. պատճառն իմիջեանցի կտակն է։ Այդ կտակի Յանձնաժողովն ի նկատ առնելով կտակաւորաբար զանազան առիթներու մէջ յայտնուած փառք, կ'որոշէ որ նուէրի արժանաւոր պատի կրնան համարուիլ նաեւ ազգային հիշատակներէ առնուած թատերերգութիւններն. այդ որոշումը կը գայթակղեցնէ մեր մաքրակրօն բարի աշխարհականներն ու սրբակրօն եկեղեցականներն որոց վրայ կը հանգչի Մխիթարեան հանգուցեալ ծերունի վարդապետի մը հոգին։ Շատ տարինեք առաջ Վենետիկ Մխիթարեան վարդապետ մը կը յօրինէ երեւելի արանց բառգիրք մը որ կը սպառարկուի փառաւոր կերպով եւ կը կազմուի ոսկեգոծ, բայց Մխիթարեանը երբէք չեն համարձակած զայն հրապարակահանել. մէկ օրինակը Վենետիկ տեսայ։ Մոլիէի վրայ խօսելով ծերունի վարդապետը կ'ըսէ «ամպարիչտո այս թշուառական»։ — Կործեա թէ արդի մեր վարչութիւնը զրիշ ձեռքն առած գրած է։

Բայց եթէ մեր վարչութիւնն անհաշտ թշնամի է ազգային թատերերգութեանց, այդ սխալալութեան գաղտնիքը փնտռելու չէ՛ միայն կրօնական զգացմանց մէջ, այլ մի քիչ աւելի բարձր տեսակետներ ունին։ — Ո՞չ ապաքէն օր մը ուրիշ Նար-Պէյ մը, ուրիշ Հէթիմեան մը, ուրիշ Պէշիքթաշեան մը, ուրիշ Գուրեան մը, ուրիշ Թերզեան մը, ուրիշ Եսայեան մը կարող են ազգային ոգւով նոր թատերերգութիւններ գրել եւ չլըրնար պատահիլ որ Բերայի արդի Թաղ, Խորհուրդը նուէրները բաշխելու յանձնաժողով լինի այն ատեն։ Եւ կրնա՞ք երեւակայել զայդ հեղինակութիւնները պատկեն, իրենց ձեռքովը պատկեն այնպիսի անձինք ոյք կը սոսկան հայ անուն մը դնել Բերայի Հայոց թատրոնին։ Ուրեմն ապագայն ապահովելու է։ Եւ այդ ապահովութեան համար այժմ մէն իրարու հետ կը գիտնին կը կռուին վարչական անդամք։

Եւ մեղաւորը դարձեալ հրապարակա-
գիրներն են։ Արդարեւ երկար ատենէ ի վեր
միշտ դժտութիւն, միշտ յարձակումներ տե-
ղի կ'ունենան ազգին եղած նուէրներու,
կտակներու մասին։ Այդ նուէրներն ու կը-
տակները կը դրուին ազգին ի կենդանու-
թեան նուիրատուներու և կտակարարներու։
Յովսէփ իշխման անց դէպք քաղաք ունեցու-
լու մեռնիլ, ինչ որ ազգային աւան-
դութեանց հակառակ է և այդ աւանդու-
թիւնները խախտողներն հրապարակադիր-
ներն եղան միշտ յարձակելով հետ մահուան
եղած կտակի մասին։ Մեր հայերը կը նը-
մանին — կամ թէ կը նմանէին — այն հա-
րուստին որ կ'ուզէր բարեգործութիւն ընել,
բայց ազահութիւնը կը ջլտէր նորա բարի
տրամադրութիւններն։ Որպէս զի ազահու-
թիւն և բարեստութիւն հաշտեցած
միմեանց հետ, մեր բարեսիրտ ազահը զիմեց
հանձարեղ միջոցի մը։ Երբ իրմէն օգնու-
թիւն ուզողներ կը ներկայանային, քսակը
առնէին կը դէհը, ինքն երեսը մէկ կ'զմ
կը դարձնէր, աչքերը կը փակէր և ձեռքերձ
երբոյնելով կ'ըսէր — ա՛ւ, ա՛ւ բայց չտես-
նել։

Մեր հարուստներն աւայսպէս էին, սի-
րով կուտային բայց պայմանաւ որ իրենք չի
տեսնեն։ Ետ մեղադրեցինք զիրենք, բայց
հիմա կ'մտնենք թէ իրաւունքն իրենցն էր։
Երկապառակութեանց պատճառ չէին ուզէր
ըլլալ։

Այս անցեալ իմաստութեան անշուշտ ա-
ւանդապահներն են մեր այն տեսքը որք ազ-
գայինն որ հիւանդանոց մը պիտի կանգնէին։
Սակայն զիտեն թէ այն օրը որ նոր հիւան-
դանոցի հիմը դնեն, այն օրն ազգին խա-
ղաղութեան հիմերը պիտի քանդուին, հե-
տեւաբար չեն ուզէր այդ ձախորդութեանց
պատճառ լինել։ Ե՛րբ պիտի տեսնենք մեր
հիւանդանոցն։ Ազգայի տուածը պիտի
պատասխանէ։

Մի՛ մեռնիր իշուկս, դարձան արտորայ կը
ըսենի կուտես։

ՀՐԱԶԳԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻՏԱԼԻԱ

Իտալիոյ նախարարութեան կազմութիւ-
նը բաւական մտաւորականութիւն կը պատճա-
ռէ Եւրոպիոյ Նոր երբեակի գաղնակցութիւնն
ստորագրուելն վերջ այդպիսի նախարարու-
թեան մը գոյութիւնն եւրոպական պատե-
րազմի թէ խաղաղութեան նշան է։ Նախ-
կին արտաքին գործոց նախարար տը Ռուպի-
լան կոմսն «առաքելական պաշտօն մը» կա-
տարեց Իտալիոյ, Աւստրիոյ եւ Գերմանիոյ
միջեւ նոր գաղնակցութիւն մը կնքելով։
Եւտոյ հեռացողին զնա, այլ եւս զլոմոնին
Զուրը քամուած էր եւ լիմոնն հարկ էր նե-
տելը, եւ սակայն Ռուպիլան կոմսն հաճոյ էր
Գերմանիոյ եւ մանաւանդ Աւստրիոյ։ Ում-
պէթիոյ թագաւորն եւ իտալական արքու-
նիքը կը փափաքէին որ տը Ռուպիլան իւր
պաշտօնը շարունակէ, սակայն կոմսը կնքած
էր այդ գաղնակցութիւն չառ ուղադիր չըլ-
լալով խորհրդ արանական պահանջմանց, հե-
տեւաբար հարկ եղաւ որ զոհուի։ Նոր նա-
խարարութեան գլուխ եւ արտաքին գոր-
ծոց նախարարն է Պ. Տէրրէթիս, պարկեշտ
հայրենասէրն որոյ առողջ գաղափարութիւնը,
գործնական միտքը վստահութիւն կը ներ-

շնջէ թէ Իտալիոյ եւ թէ Եւրոպիոյ տառը
տարի է յորմէ հետէ Պ. Տէրրէթիս Իտալիոյ
նախարարապետ է, եւ այս ժամանակամի-
ջոցին իւր խոհականութեան ապացոյցները
տուաւ լիովին։

Սակայն նոր նախարարութեան մէջ նա-
խարարապետէն աւելի կարեւոր դիրք մը
ունի Պ. Քրիսթի, ներքին գործոց նախա-
րարն, հանրածանօթ իւր ատենութեամբն
ընդդէմ Աւստրիոյ։

Պ. Քրիսթի շնորհիւ իւր անցեալին եւ
իւր նշանաւոր յատկութեանց կը համարուի
նոր նախարարութեան ոգին, եւ կը գրաւէ
Իտալիոյ եւ Եւրոպիոյ ուղադրութիւնն։ Ի-
տալիոյ միութեան հիմնադիրներէն մին է
եւ Կարլալտի իւր փառաց մեծ մասը կը
պարտի Պ. Քրիսթիին։ Վենետիկն ու Հռոմն
Իտալիոյ հետ միացնելու համար 1861 էն
1870 ոգի ի բռնին աշխատողներու մէջ նշա-
նաւոր հանդիսացաւ, եւ 1866ին պարագը-
լուս եղաւ այն խոմբին որ կը փափագէր
գաղնակցիլ Բրուսիոյ հետ։ Հաւատարիմ
գտնուեցաւ այդ գաղափարին եւ 1870 ին
ընդդիմադրեց Վիգգոր Էմմանուէլի փա-
փազանաց, Պրանսայի օգնութեան հաս-
նելու մասին։

Թէ իբր նախագահ Երեսմիտիսանական
Ժողովոյ թէ իբր ներքին գործոց նախարար
1876էն վերջ Պ. Քրիսթի իւր հաստատ բնա-
ւորութեան եւ մեծ գործունէութեան ա-
պացոյցներ տուաւ։ Իբր մին ձախողու-
եան պետերու ազգեցիկ գեր մը ունեցաւ
նախկին Տէրրէթիսի նախարարութեան քա-
ջայման մէջ։ Յոյժ գործունէայ, Պ. Քրիսթի
հետաժուտ պիտի լինի զօրացնել պատե-
րազմական եւ ծովային գործոց նախարա-
րութիւններն։

Եթէ Պ. Քրիսթի անհաշտ թշնամի մը
հանդիսացած է ընդդէմ Աւստրիոյ որոյ տի-
րապետութեան ներքեւ են տակաւին իտա-
լական երկիրներ, թշնամի եւս նկատուած
է Պրանսայի համար, սակայն սիրով ընդու-
նեց Պատուոյ Ագգէնին նշանն ապացուցա-
նելու համար թէ կարծուածին չափ հակա-
ռակորդ չէ Պրանսայի։

Իսկ Գերմանիոյ համար իւր բարեկամու-
թիւնն անսահման է, եւ շնորհիւ այդ բա-
րեկամութեան Գերմանիա պիտի կարենայ
փարատել Աւստրիոյ կառնածներն։

Պ. Քրիսթի յանդուգն, կրակոտ եւ պա-
տերազմասէր է, սակայն Պ. Տէրրէթիս կը
չափաւորէ նորա եռանդն, եւ այսպէս Իտա-
լիա կարող պիտի լինի ո՛չ թոյլ տկար ու
երկշուտ լինիլու ո՛չ ալ անխոհեմ եւ յան-
գուգն, եւ այս քաղաքականութիւնն որ այն-
քան օգտաւէտ եղաւ այդ նորածին թա-
գաւորութեան, անշուշտ նորանոր բարիքներ
եւս պիտի արտադրէ։

ՔՐԱՆՍԱ

1889ին Արուեստահանդէսի համար պատ-
րաստութիւնը կը շարունակուին, սակայն
այդ արուեստահանդէս տիւրքերական տիւտ-
զոսին չպիտի արժանանայ։ Եւրոպական
մեծ տէրութիւնը պիտի չուզեն մասնակ-
ցիլ։ Ռուսիա որքան ալ քերթ համակրանք
ունենայ Պրանսայի համար, այսուհանդերձ
մերժած է ներկայացուիլ այդ արուեստա-
հանդիսին, նոյնն ըրած է նաեւ Գերմանիա։

Արուեստահանդէսը կը տօնէ Պրանսայի
միապետութեան տաղալիման սկզբնաւորու-
թեան թուականն և միապետական իշխա-
նութիւնը չեն կարող անշուշտ գոհութեամբ
սրտի հանգիստակից լինել այդպիսի տօնա-

խմբութեան մը։ Յետոյ այդ թուականին
շնորհիւն էր որ Պրանսա ունեցաւ բիշ յե-
տոյ հասարակապետութիւնն որոյ բանակնե-
րը թէպէտ «Ան—Քիւլօթ» — անվարտի-
ներէ կազմուած բայց և այնպէս եւրոպա-
կան գաղնակցութեան հզօր բանակներն
ճախջախեցին։ Կորակոր պարտուեցան հին
կայսրութիւնը և նոր հասարակապետու-
թիւնը բիշ յետոյ գրաւեցին երկիրներն
անոնց որք Պրանսան երկրորդ Բալկան մը
ընելու փափագ ունէին։ Մի դար անցած
է բայց, Եւրոպա չէ մոռցած իւր պարտու-
թիւնը, մանաւանդ որ Գերմանիոյ արդի
կայսրն իւր աղայութեան օրերուն մէջ վայե-
լեց Պրանսայի յաղթութեանց դառն պը-
տուղներն։ Յայտնի չէ տակաւին թէ Ա-
ւստրիա պիտի մասնակցի՞ Ի՞նչ ոյիտի ըսէ
Իտալիա որոյ թագաւորն այժմ ազնուապե-
տական յաւակնութիւններ սկսած է ունե-
նալ։

— Պրանսա Անգլիոյ հետ փոքր պաղու-
թեան առթիւ մը ունեցաւ այս օրերս։ Է-
տիմպուրիի դուքսի նաւատորմին երբ հա-
սաւ Քանի առջեւ, Պրանսայի օղջուեցին
զայն թնդանօթներով։ Ըստ սովորութեան
անգլիական նաւատորմին ալ թնդանօթի
քսան և մէկ հարուածով պարտաւոր էր ող-
ջուեւ Պրանսանցիները, սակայն այս պար-
տականութիւնը չկատարեցին։ Քանի բնա-
կիչը յուզուեցան, ծովային իշխանութիւնն
Էտիմպուրիի դուքսէն քացադրութիւն պա-
հանջեց և դուքսը պատասխանեց թէ ա-
ճապարանք գալով ի Քան — ուր Անգլիոյ
թագուհին եկած էր — իւր գրօշակը պար-
զած էր այնպիսի նաւու մը վրայ ուր յար-
մար թնդանօթներ չէին գտնուեր։ Այս
պատասխանը գոհացուցիլ երեցաւ Պրան-
սացոց խոհական մասին, սակայն անգլիա-
կան թերթերն սկսան խիստ յարձակումներ
ընել իրենց թագուհոյն սրղւոյն վրայ, որ
այսպիսի պարագայներու մէջ կը մոռնայ թէ
Ինչպիսի նաւու մը վրայ իւր գրօշակը պար-
զելու է։ Ինչ պիտի լինի կ'ըսեն եթէ
աւելի մեծ պարագայներու մէջ, օրինակի
համար նաւային պատերազմի մը միջոցին
ազնուական դուքսն այսպիսի մոռացումներ
ունենայ։

— Ի վիշնաւ, Աւագ Հինգշաբթի օր, Ֆը-
րանձ Եոզէֆ Կայսրն, ըստ սովորութեան,
ոտնուայի արարողութիւնը կատարեց, 12
աղքատ ծերունեաց ոտքերը լուալով Պալա-
տան մատուալին մէջ։ Կայսրուհին, բացակայ
լինելով, չլուաց 12 պառաւներուն ոտքերը։
Բայց 12 ծերունի այրերն և 12 աղքատ կի-
ներն ստացան սովորական պարգէները։

— Տարւոյն ամենայն աւուրց մէջ, ա-
ռանց ի բաց առնելու կիւրակէներն ու տօ-
ներն, իրօք մէկ օր միայն կայ որ գործի
օր չի նկատուիր ի Պերլին, և այս ալ Աւագ
Ուրբաթ օրն է, կ'ըսէ Թայֆլին Պերլինի
Թիլթակիցն։ Այն օրն է գերազանցապէս
կրօնական օրն, յորում ամենէն անտարբեր-
ներն լակ եկեղեցի կ'երթան, և եկեղեցիք
առաւօտէն մինչեւ իրիկուն լի են բազմու-
թեամբ։ Ինչպէս Աւագ Հինգշաբթի օր, Ա-
ւագ Ուրբաթ օրն ալ թատրոնը փակ են։
Պերլինի բողոքական ու կաթոլիկ ժողո-
վուրդն, ի գլուխ ունենալով Գահաժառանգ
Իշխանն, երկիւղածութեամբ յարգեց Աւագ
Ուրբաթի նաւիրական յիշատակն՝ ասորիլ Յին
լցունելով Գերմանիոյ մայրաքաղաքին բոլոր
եկեղեցիներն։

